ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1

ք.Երևան « 02 » « 12 » 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Գայանե Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1357800000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ը, որի չափը կհստակեցվի լրացուցիչ՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __16__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Կատարողի կողմից կանխավճարի չափով բանկային երաշխիքի տրամադրումը, որը Կատարողը պետք է ներկայացնի համապատասխան համաձայնագիր կնքելուց հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Պատվիրատուի կողմից կանխավճարի փոխանցումը Կատարողի բանկային հաշվին պետք է կատարվի բանկային երաշխիքի հիման վրա՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
900011175016	հ/հ 220533332767000
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 00851011
ՔԿ ծառայության	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ տնօրեն՝
Ա.Ղազարյան	Գ. Մարգարյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
	Կ.Տ.

Հավելված N 1
«02» «12» 2021 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության								
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը**
1	55321100/501	Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում	Քրեակատարողական համակարգի բարեփոխումների և զարգացման ներկա պահանջներից ելնելով, ինչպես նաև համակարգի բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով՝ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ է, ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկում («Արմավիր», «Նուբարաշեն», «Աբովյան», «Գորիս», «Դատապարտյալների հիվանդանոց», «Վարդաշեն», «Երևան-Կենտրոն», «Հրազդան»*, «Սևան», «Կոշ»*, «Արթիկ» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում) պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ (ներառյալ հացը), որը իրենից ներկայացնում է սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգ, ինչն իրականացվելու է հետևյալ փուլերով՝ • ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը կտրամադրվի Պատվիրատուի կողմից, անհրաժեշտ սննդամթերքի պահեստավորում՝ Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից), • ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի խոհանոցում (կամ Պատվիրատուի կողմից տրամադրված ՔԿՀ-ի այլ տարածքում) թարմ և որակյալ սննդի պատրաստում՝ մասնագիտացված	ՀՀ դրամ	1357800000	1	ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներ, հասցեները տես հավելված 2-ում	26.12.2021թ.-ից մինչև 25.12.2022թ. ներառյալ՝ 365 օր:

			խոհարարների կողմից (բացի «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ներից, որոնց սննդի պատրաստումը կարող է իրականացվել նաև ՔԿՀ-ի տարածքից դուրս), Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սպասքի և սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սպասք և սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից): **ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Պատվիրատուի կողմից (հաշվին), իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Կատարողի կողմից (հաշվին),** • ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին որակյալ սննդի տրամադրում (ներառյալ հացը), համաձայն նախորոք հաստատված ճաշացուցակի՝ մեկ կամ երկու շաբաթվա համար, որը տարբեր շաբաթների համար փոփոխվում է՝ բազմազանությունը ապահովելու նպատակով (ճաշացուցակի մեկ շաբաթվա օրինակելի ձևը տես հավելված 1-ում): Ճաշացուցակները կազմվում են Կատարողի կողմից և հաստատվում է քրեակատարողական հիմնարկի պետի կողմից: Նշված ճանապարհով պատրաստված սնունդը պետք է լինի բազմազան, որակյալ և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովի նվազագույնը՝ 2800 կիլոկալորիա: Ճաշացուցակները կազմելիս պետք է առաջնորդվել 2015թ.-ի հոկտեմբերի 15-ի ՀՀ կառավարության N 1182-Ն և 2003թ.-ի հուլիսի 31-ի ՀՀ կառավարության N961-Ն որոշումների պահանջներով, ապահովվելով սննդամթերքի չափաբաժինները (չափաբաժիններից ոչ պակաս): **ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների օրական միջին թիվը ծառայությունների մատուցման ընթացքում նախատեսվում է առավելագույնը՝ 2400 մարդ:** Սննդի պատրաստման ծառայությունները պետք է					

			իրականացվեն՝ **սկսած 26.12.2021թ.-ից մինչև 25.12.2022թ. ներառյալ (365 օր), համաձայն հավելված 2-ով ներկայացված հասցեների:** **Պատրաստի սննդի մատուցման ծառայություններն իրականացնելիս Կատարողը պետք է իրականացնի հետևյալ լրացուցիչ ծառայությունները.** ա. Անհրաժեշտ սառանարանների և վառարանների տրամադրում և մոնտաժում՝ ՔԿ հիմնարկում, իսկ ծառայության ավարտից հետո՝ ապամոնտաժում և հետ վերադարձ: բ. Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ տեխնիկական միջոցների խափանումների դեպքում, դրանց վերանորոգման և սպասարկման ծառայություններ, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ մեկանգամյա տարաների տրամադրում: գ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և խոհանոցների տարածքների բարվոք վիճակի պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց ընթացիկ նորոգում և այդ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում սննդի հատկացման գործընթացի անխափանության ապահովում. դ. Կատարողի օգտագործման տակ գտնվող պահեստների և խոհանոցների տարածքների սանիտարահիգենիկ միջոցառումների կազմակերպում և մշտապես մաքրության ապահովում: **Մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը որոշելու համար պետք է Մասնակցի գնային առաջարկի ընդհանուր գումարը (1357800000 ՀՀ դրամ) բաժանել հավելված 2-ով ներկայացված գրաֆիկով նշվածի օրերի (365 օր) և թվաքանակի (2400 մարդ) վրա (1357800000:365:2400=1550), նշված գումարով՝ 1550 (մեկ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամով, Կատարողն իրականացնելու է մեկ անձի օրվա սննդի տրամադրումը:** ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների միջին թվաքանակի մինչև 20 %-ի չափով նախատեսել, որ հիվանդություններով տառապող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման նպատակով, բժիշկի տված եզրակացության հիման վրա, պետք է ապահովել դիետիկ կամ հավելյալ սննդի պատրաստում և տրամադրում, առանց լրացուցիչ գումար նախատեսելու: Կատարողի կողմից պատրաստի սննդի տրամադրումն իրականացվում է նաև ՀՀ քաղաքացիական					

			հիվանդանոցներում բուժում ստացող կալանավորված անձանց և դատապարտյալներին, կատարողի տրանսպորտով և միջոցների հաշվին: ՀՀ քաղաքացիական հիվանդանոցներում բուժում ստացող կալանավորված անձանց և դատապարտյալների ցանկը Կատարողին տրամադրվում է Պատվիրատուի կողմից: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկից կալանավորված անձիք և/կամ դատապարտյալները (օրական միջինը մինչև 40 մարդ) չորս և ավելի ժամ տևողությամբ տեղափոխում են դատական նիստերի, ուստի նշված անձանց համար ճաշի փոխարեն տրամադրվում է չոր սնունդ՝ միանգամյա օգտագործման տարաներով, առանց լրացուցիչ գումար նախատեսելու (միանգամյա օգտագործման տարաները կարող են տրամադրվել նաև ՔԿՀ-ի կողմից): **Սննդի պատրաստման ծառայություններն իրականացնելիս Կատարողը պետք է պահպանի սննդի անվտանգության հետ կապված բոլոր գործառույթները:** **ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի սնվողների, հիվանդների, քաղաքացիական հիվանդանոցներում գտնվողների և դատական նիստերի մեկնողների քանակները Կատարողին է տրամադրվում, ՔԿ հիմնարկի վարչակազմի կողմից, սննդի պատրաստման նախորդ օրվա ընթացքում՝ մինչև 17:00-ն:**					

<u>* Ծանոթություն՝ 2022թ-ին նախատեսվում է ՀՀ ԱՆ «Հրազդան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների փակման գործընթաց և կապված ՀՀ ԱՆ «Հրազդան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների փակման հետ՝ այդ հիմնարկներում պահվող կալանավորված անձիք և դատապարտյալները կտեղափոխվեն այլ քրեակատարողական հիմնարկներ և նշված հիմնարկներում (հավանական է 2022 թ.-ի հունվարի 1-ից) կդադարեցվեն սննդի պատրաստման ծառայությունները:</u>

Հավելված 1

Ճաշացուցակի մեկ շաբաթվա օրինակելի ձև

	Անվանում	Չափաբաժին՝ գրամներով	Կկալ
	Երկուշաբթի		
	Նախաճաշ		
1	Սպիտակաձավարով շիլա	150	157
2	Ջեմ	30	78
3	Կարագ	20	150
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Դեղին ոլոռով ապուր	300	230
2	Տավարի տեֆտելի տոմատային սոուսով	70	193
3	Վերմիշելով փլավ	200	242
4	Մառոլով, վարունգով աղցան	100	86
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Բրնձով փլավ	250	378
2	Պոմիդորով, գլ.սոխ, պղպեղով, կանաչիներով աղցան	100	98
3	Պանիր	30	86
4	Թեյ, շաքարավազ	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**3269.3**
	Երեքշաբթի		
	Նախաճաշ		
1	Խաշած կարտոֆիլ կանաչիներով	150	143
2	Ձվածեղ	50	92
3	Բիսկվիթ	70	99
4	Թեյ ,շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Սպաս	300	119
2	Հավի ձողեր	70	84
3	Սպագետի	200	209.2
4	Բազուկ թթվասերով	100	95.3
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Աջաբ-սանդալ	250	321
2	Թաբուլե	100	100
3	Պանիր	30	78
4	Թեյ, շաքարավազ	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**2911.8**
	Չորեքշաբթի		
	Նախաճաշ		
1	Հնդկաձավարով փլավ	150	143
2	Նրբերշիկ	50	72.6
3	Բիսկվիթ	70	99

4	Թեյ, շաքարավազ	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Բրնձով ապուր	300	257
2	Ձուկ	70	112
3	Կարտոֆիլի խյուս	200	268
4	Պոմիդորով, վարունգով, մառոլով աղցան	100	74
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Ծաղկակաղամբ ձվով	250	162.5
2	Օլիվյե կռաբով	100	178
3	Պանիր	30	78
4	Թեյ, շաքարավազ	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**3015.4**
	Հինգշաբթի		
	Նախաճաշ		
1	Կաթնով	150	167
2	Խտացրած կաթ	30	96
3	Բիսկվիթ խնձորով	30	115
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Մակարոնով ապուր	300	151
2	Հավի կոտլետ	70	138
3	Հաճարով փլավ	200	262.4
4	Կաղամբով, պոմիդորով, վարունգով աղցան	100	85
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Ջեռոցի կարտոֆիլ	250	234
2	Վինեգրեդ	100	87
3	Պանիր	30	78
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**2984.7**
	Ուրբաթ		
	Նախաճաշ		
1	Վարսակով շիլա	150	132
2	Ձու	1 հատ	80
3	Կարագ	20	150
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Բորշչ	300	189
2	Բոլոնեզ սոուս	70	182
3	Արիշտայով փլավ	200	250
4	Թաբուլե	100	100
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		

1	Իմամ-բայալդի	250	390.6
2	Պոմիդորով, վարունգով, ռեհանով աղցան	100	81
3	Պանիր	30	78
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**3203.9**
	Շաբաթ		
	Նախաճաշ		
1	Կարտոֆիլի խյուս	150	201
2	Երշիկ	30	92
3	Բիսկվիթ	30	99
4	Թեյ ,շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Աջաբ-սանդալ ապուր	300	203
2	Ձուկ	70	128
3	Բրնձով, սամիթով փլավ	200	305
4	Մառոլով, պոմիդորով, կանաչիներով աղցան	100	61
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Մակարոնով փլավ	250	260
2	Սմբուկի, դդմիկի և կարմիր պղպեղի խավիար	100	96
3	Պանիր	30	86
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**3102.3**
	Կիրակի		
	Նախաճաշ		
1	Բրնձով շիլա	150	117
2	Կաթնաշոռ թթվասերով	50	91
3	Բիսկվիթ կակաոյով	30	103
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ճաշ		
1	Վերմիշելով ապուր	300	148
2	հավի տեֆտելի	70	138
3	Հնդկաձավարով փլավ	200	236
4	Օլիվյե երշիկով	100	198
5	Հաց	200	512
6	Կոմպոտ թարմ մրգերից	200	120.7
	Ընթրիք		
1	Ջեռոցի կարտոֆիլ և բանջարեղեն	250	283
2	Կաղամբով, պոմիդորով, կանաչիներով աղցան	100	96
3	Պանիր	30	78
4	Թեյ շաքարավազով	200	85.3
5	Հաց	150	384
	Ընդամենը		**3059.3**

Մեկ անձի յոթ օրվա միջին օրվա կալորիականությունը – 3078,1 Կկալ

Հավելված 2

Պատրաստի սննդի ծառայությունների մատուցման հասցեները և անձանց քանակները

N	ՔԿ հիմնարկի անվանումը	Անձանց մոտավոր քանակը	ՔԿ հիմնարկի հասցեն
1	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ	900	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա խճ. 23
2	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ	360	ՀՀ, ք.Երևան, Նուբարաշենի խճ. 2
3	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ	80	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան
4	ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ	80	ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Նարեկացու 5
5	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ	140	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 2Ա
6	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ	130	ՀՀ, ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 7
7	ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ	30	ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 104
8	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ	160	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, միկրոշրջան 45
9	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ	100	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան
10	ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ	70	ՀՀ, Արագածոտնի մարզ, գյուղ Կոշ
11	ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ	180	ՀՀ, Շիրակի մարզ, գյուղ Հառիճ
12	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ	170	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տավրոսի 20
	Ընդամենը	**2400**	

Ծանոթություն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների քանակներն, ըստ քրեակատարողական հիմնարկների կարող են տատանվել (ավել կամ պակաս), սակայն ծառայությունների մատուցման ընթացքում՝ պատրաստի սննդից օգտվողների օրական միջին ընդհանուր քանակը չի կարող ավել լինել 2400 անձից:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության պետ
Ա.Ղազարյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բունիաթյան 7
Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
Հ/Հ՝ 220533332767000
ՀՎՀՀ՝ 00851011
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ տնօրեն՝
Գ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«02» «12» 2021թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 25 %-ի չափով կանխավճարի վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	55321100/501	Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն												

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության պետ
Ա.Ղազարյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
Հ/Հ՝ 220533332767000
ՀՎՀՀ՝ 00851011

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ տնօրեն՝
Գ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«_02_» «_12_» 2021 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«02» «12» 2021 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____
-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն